ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3522-Ա « 16 » հուլիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի
Հ.4840-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով ինքնակամ կառույցների արտաքին չափերի վերաբերյալ «Հայկ Մաթևոսյան» Ա/Ձ-ի կողմից 29.01.2025թ. տրված տեղեկանքը և 04.02.2026թ. եզրակացությունը, ինչպես նաև քաղաքացի Արման Արևյանի դիմումները (25.12.2025թ. հ.Դ-144312-25, 04.02.2026թ. հ.Դ-9856-26).

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի նոյեմբերի 28-ի «Երևան, Աջափնյակ, Նազարբեկյան թաղամաս, հ.28/2 հողամաս հասցեում սեփականություն հանդիսացող հողամասում քաղաքացի Արման Սուրիկի Արևյանի կողմից ինքնակամ իրականացված կառույցն օրինականացնելու և հողամասի գործառնական նշանակությունը սահմանելու մասին» հ.4840-Ա որոշման /այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 2-րդ կետում՝ «443,5քմ» բառերը փոխարինել «414,95քմ» բառերով.

2) Որոշման 4-րդ կետի 1)-ին ենթակետում՝ «1672439 (մեկ միլիոն վեց հարյուր յոթանասուներկու հազար չորս հարյուր երեսունինը)» բառերը փոխարինել «1564777 (մեկ միլիոն հինգ հարյուր վաթսունչորս հազար յոթ հարյուր յոթանասունյոթ)» բառերով:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ